



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Ջորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրա-
կան գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ,
թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic
spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation
Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 8	
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ 15	
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 25	
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲԱՂԱԲՑՈՒՐ..... 32	
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ 40	
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇՆԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 47	
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 54	
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈԼՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՏ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ 63	
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ..... 69	
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՍՏԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ 76	
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ..... 88	
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 97	
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Մարիամ Առաքելյան

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան*

Հոդվածի նպատակն է զուգադրական վերլուծության ենթարկելով ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները ավանդական կրթության և մեդիակրթության համատեքստերում՝ վեր հանել մեդիակրթության համատեքստի ընձեռած լայն հնարավորությունները ընթերցանության կարողությունների զարգացմանն ուղղված վարժությունների կատարման գործում:

Բանալի բառեր. *մեդիակրթության համատեքստ, մեդիատեքստ, հիպերտեքստ, բազմաչափ, էլեկտրոնային հարթակ, տեսաձայնային բաղադրիչ, էլեկտրոնային ընթերցարան:*

Ներածություն

Ընթերցանությունն իմացական գործունեություն է, որի նպատակը տեքստում հաղորդվող տեղեկության ընկալումն ու իմաստավորումն է: Ընթերցողն այն իրականացնում է հաղորդվող տեղեկատվության վերամշակմանն ուղղված մի շարք մտածական գործողությունների շնորհիվ: Դա նշանակում է, որ ընթերցողը միաժամանակ լուծում է մի քանի խնդիր, որը պահանջում է տարբեր կարգի հմտությունների ձևավորվածություն (Աստվածատրյան 1985:234): Եթե ավանդական կրթության համատեքստում խոսքը գնում էր միայն տեքստի ճանաչողական ընկալման հմտությունների մասին, ապա մեդիակրթության համատեքստում ընթերցողին անհրաժեշտ են մի շարք այլ հմտություններ մեդիատեքստերի ճիշտ ընկալման և իմաստավորման համար (Serafini 2010:87): Մեդիակրթության համատեքստում ընթերցանության ուսուցման առանձնահատկությունների լուսաբանման նպատակով նախ և առաջ դիտարկենք, թե ընթերցանությունը, որպես ճանաչողական-հաղորդակցական գործունեություն, ինչ փոփոխությունների է ենթարկվում ավանդական կրթության և մեդիակրթության համատեքստերում:

Ավանդական կրթության համատեքստ	Մեդիակրթության համատեքստ
Մեկ ամբողջական տեքստի առկայություն	Մեկ ամբողջական տեքստի և բազմաթիվ հիպերտեքստերի առկայություն
Ընթերցող – տպագիր տեքստ հարաբերակցություն	Ընթերցող-ինտերֆեյս-մեդիատեքստ հարաբերակցություն

Առանձին բառարանի առկայություն	Ինտեգրված էլեկտրոնային բառարանի առկայություն
Անձանոթ բառի որոնում բառարանում	Անձանոթ բառի մատնանշում և առցանց թարգմանության կամ բացատրության տրամադրում (Amazon Kindle)
Տեքստի վերբերյալ լրացուցիչ տեղեկատվության սահմանափակ աղբյուրներ հնարավոր ժամանակային խոչընդոտով	Տեքստի վերբերյալ լրացուցիչ տեղեկատվության բազմաթիվ աղբյուրների վայրկենական հասանելիություն
Տեքստային և գրաֆիկական միաչափ պատկերավորում	Տեքստային, գրաֆիկական, ձայնային բազմաչափ պատկերավորում (Glogster, Prezi, Youtube, Power Point)
Տեքստի ձևավորման անփոփոխելիություն	Տեքստի ձևավորման փոփոխելիություն՝ տառաչափի, ֆոնտի, կարգավորման հնարավորություններով (Wordle.net) (OECD 2010:34)
Հետադարձ կապի բացակայություն	Հետադարձ կապի լայն հնարավորությունների առկայություն
Ընթերցում միայն տպագիր աղբյուրից	Ընթերցում բազմաթիվ աղբյուրներից, ինչպես օրինակ՝ էլեկտրոնային գիրք (e-book), ձայնային գիրք (audio book), փոխներգործուն թվայնացված պատմվածքների գիրք (interactive digital storybook), վեբ-ընթերցարաններ (web-readers)
Տեքստերի պահպանման և արխիվացման սահմանափակ հնարավորություններ	Տեքստերի պահպանման և արխիվացման լայն հնարավորություններ թվայնացված գրադարակների միջոցով (Goodreads.com, Shelfari.com, LibraryThing, Jacketflap, Delicious 3, Book Scanners)
Տեքստի քննարկում սահմանափակ լսարանի հետ	Տեքստի քննարկում անսահմանափակ լսարանի հետ առցանց հարթակում (FaceTime, Facebook, Twitter, iChat)
Տեքստի քննարկում միայն ֆիզիկական լսարանում	Տեքստի քննարկում առցանց լսարանում առանց տարածական և ժամանակային խոչընդոտի (wikispaces.com)
Մեկուսացված ընթերցանություն	Համագործակցային ընթերցում առցանց հարթակում (Serafini 2013:401)
Տեքստի գծային ձևաչափ (linear arrangement)	Տեքստի ոչ գծային, հիպերտեքստային ձևաչափ (hypertext arrangement) (OECD 2010:35)

Մեդիակրթության համատեքստում ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները հիմնված են մեդիատեքստերի հետևյալ բնորոշիչների վրա.

- **Միջնորդավորվածություն.** Մեդիատեքստի կարևորագույն բնորոշիչներից մեկը փոխանցման միջոցն է, որով պայմանավորվում է մեդիատեքստի լեզվական ձևաչափը: Այսպես, տպագիր մեդիատեքստերը ենթադրում են գրաֆիկական և պատկերային ձևաչափ՝ ուղեկցված վերբալ տեքստով: Ռադիոտեքստը ներառում է ձայնային բաղադրիչը, իսկ հեռուստատեքստը միավորում է վերբալ և ձայնային բաղադրիչները տեսաերկրի հետ: Բնութերնետն ընձեռում է անսահմանափակ տեղեկատվության փոխանցման բազմազան միջոցներ (Кузьмина 2011:13): Մ. Կազակը մեդիատեքստի այս առանձնահատկությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Տեքստի միջնորդավորվածություն այն փոխանցող միջոցի տեխնիկական հնարավորություններով և տեքստի իմաստաբանական կառուցվածքի կախվածություն փոխանցող միջոցի առանձնահատկություններից» (Казак 2012:32):
- **Զանգվածայնություն.** Զանգվածային հաղորդակցությունը սոցիալական շփման տեսակ է, որում էականորեն փոխվում են տեղեկատվության հեղինակի (սուբյեկտի) և հասցեատիրոջ կերպարները (Кузьмина 2011:14): Ա. Լեոնտևի կարծիքով մեդիատեքստն ունի այսպես կոչված «երկակի սուբյեկտ»: «Մի կողմից այն մեկ անձ է կամ անհատ, ինչպես օրինակ՝ ռադիո կամ հեռուստահաղորդավարը, լրագրողը, էլեկտրոնային որևէ հոդվածի հեղինակը, մյուս կողմից մի ամբողջ կոլեկտիվ կամ հասարակությունն ինքնին» (Леонтев 2008:135): Այսինքն՝ այս դեպքում մեդիատեքստը դառնում է կոլեկտիվի և ոչ թե առանձին անհատի արտադրանքը (Арманова 2008:110): Իսկ մեդիատեքստի հասցեատերը զանգվածային լսարանն է՝ անորոշ քանակով մարդկանց խումբ, ովքեր մտնելով միջնորդավորված սոցիալական շփման մեջ դառնում են անանուն և բազմաբնույթ (Волков 2008:130):
- **Ինտեգրատիվ բնույթ կամ «բազմակողայնություն».** «Կոդ» հասկացությունը լեզվաբանություն մուտք է գործել ինֆորմատիկայի ոլորտից նշան կամ նշանային համակարգ իմաստով, որը ստեղծվել է որոշակի օրինաչափությունների համապատասխան և պարունակում է հասցեագրին ու հասցեատիրոջը հայտնի տեղեկատվություն (Кузьмина 2011:15): Ժամանակակից մեդիատեքստերն ինչպես ստեղծման, այնպես էլ ներկայացման ձևով բազմաչափ են, միքսված (Валгина 2003:127) և բազմակողային (Чернявская 2009:90)՝ մեկ իմաստային դաշտի մեջ ինտեգրելով բազմաբնույթ բաղադրիչներ՝ վերբալ, ձայնային, տեսաձայնային և այլն (Кузьмина 2011:15): Ռոժդեստովենսկին մեդիատեքստը բնորոշում է որպես «տեքստ՝ միքսված տարբեր ոչ վերբալ նշանային համակարգերով» (Рождественский 1996:166)
- **Բաց կամ անավարտ բնույթ.** Որոշ հետազոտողների կարծիքով մեդիատեքստը ոչ միշտ է ունենում իմաստային ավարտ՝ դառնալով բաց տարբեր մեկնաբանությունների համար: Մեդիատեքստն իրենից ներկայաց-

նում է անսահմանափակ թվով հիպերտեքստերի մի համակարգ, որի յուրաքանչյուր բաղադրիչ մյուսի հղումը կարող է լինել: Ցանկացած մեդիատեքստ համարվում է տեղեկատվական անսահմանության մի մասնիկ, որին բնորոշ է բազմիմաստություն և ընթերցողի կողմից բազմաթիվ մեկնաբանությունների հնարավորություն (Кузьмина 2011:16):

Այսպիսով, մեդիակրթության համատեքստում ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները հիմնված են մեդիատեքստերի վերոհիշյալ չորս բնորոշիչների վրա, որոնք հետերոգեն բնույթ են կրում: Մեդիատեքստի հետերոգենությունը ենթադրում է ավանդական տեքստի և վիզուալիզացիայի համակցում, որն իր հերթին թույլ է տալիս մշակել ընթերցողական կարողությունների արագ և ինքնուրույն զարգացման նոր վարժությունների համակարգ: Ընթերցանության ուսուցման մեթոդիկայում տարբերակվում են երկու կարգի կարողություններ.

ա) լեզվական նյութը հասկանալու

բ) տեքստի բովանդակությունը հասկանալու

Այս կարողություններն իրենց բոլոր բաղադրիչներով հանդիսանում են վարժությունների մարզման օբյեկտներ: Լեզվական նյութի յուրացմանը նպաստող վարժությունները ձևավորում են լեզվական նյութի վերամշակման հմտություններ, որոնք կապված են ինչպես ծանոթ, այնպես էլ անծանոթ նյութի ընկալման հետ: Այս վարժությունները նախապատրաստում են ընթերցանության իրականացման միջոցները, այն է՝ ապահովում են ընթերցանությանը հատուկ լեզվական նյութի տիրապետումը (Աստվածատրյան 1985:252): Իսկ տեքստի բովանդակությունը հասկանալը ներառում է փաստական ինֆորմացիայի ընկալումն ու իմաստավորումը: Փաստական ինֆորմացիայի ընկալումը հիմնվում է՝

- տեքստի լեզվական նյութի մշակման հմտությունների վրա
- առանձին փաստերը հասկանալու վրա
- փաստերի միջև կապ հաստատելու և դրանք մեկ ամբողջության մեջ միավորելու վրա

Սա ընթերցողից պահանջում է հետևյալ կարողությունները՝

- տեքստի առանձին բաղադրիչների և առավել էական փաստերի առանձնացում
- փաստերի համադրում և ընդհանրացում
- գլխավորի և երկրորդականի տարբերակում
- ինֆորմացիայի գնահատում
- պարբերության կամ տեքստի հիմնական թեմայի որոշում
- փաստերի և մտքերի տրամաբանական մշակում և միավորում (Աստվածատրյան 1985:263-264):

Փորձենք դիտարկել ընթերցանության վերոհիշյալ կարողությունների զարգացմանն ուղղված վարժությունների համակարգը մեդիակրթության համատեքստում:

1.Բազմընտրային թեստ (Multiple Choice Test). Վարժության այս տեսակը թույլ է տալիս աշխատել ինչպես տեքստի լեզվական նյութի, այնպես էլ բովանդակության ընկալման վրա: Այս վարժությունը մեծապես զարգացնում է սովորողի

կռահման, ընթերցանության տեխնիկայի և փաստական տեղեկատվության ընկալման կարողությունները: Բազմընտրային թեստը նաև արդյունավետ վարժանք է թոուցիկ և փնտրողական ընթերցանության ուսուցման համար: Օրինակ՝

- Նշվածներից ընտրել տեքստում ընդգծված բառի հոմանիշը
- Նշվածներից ընտրել տեքստում ընդգծված բառի հականիշը
- Կռահել նշված բառի իմաստը ըստ համատեքստի
- Ընտրել նշված բառի ճիշտ բացատրությունը
- Նշվածներից ընտրել այն բառը, որը չի առնչվում տեքստի բովանդակության հետ
- Նշվածներից ընտրել տեքստում կրկնվող բառը
- Նշվածներից ընտրել տեքստում բացակայող բառը
- Նշվածներից ընտրել այն ճիշտ պատասխանը՝ ըստ քերականական պահանջի (այն բայը, որը դրված է ներկա անորոշ ժամանակաձևով, այն գոյականը, որի հոգնակի թիվը կազմվում է “es” վերջածանցով)
- Կռահել ճիշտ պատասխանը մինչ տեքստի ընթերցումը
- Ընտրել ճիշտ պատասխանը՝ ընթեցելով տեքստը
- Ընտրել ճիշտ պատասխանը՝ տեքստն ընթերցելուց հետո
- Որոշել ինչի մասին է տեքստը՝ ընտրելով ճիշտ պատասխանը
- Տեքստում գտնել այն հատվածը, որտեղ խոսվում է...

(Աստվածատրյան 1985:268)

Ընդ որում, ի տարբերություն ավանդական կրթության համատեքստի, մեդիակրթության համատեքստում բազմընտրային թեստը տրվում է էլետրոնային հարթակում՝ հնարավորություն ընձեռելով ընտրել տրված վարժության պատասխանները, անմիջապես ստուգել և ստանալ համապատասխան միավորն ու մեկնաբանումը սխալ պատասխանների դեպքում: Վարժության արագ կատարման հնարավորությունը ՏՀ տեխնոլոգիաների միջոցներով և վայրկենական ինքնաստուգման հնարավորությունն իր հերթին էականորեն բարձրացնում է սովորողների շարժառիթները կրկին ընթեցելու և կատարելու նմանատիպ վարժություններ:

2. Համակցում (Matching). Թեստի այս տեսակը նույնպես թույլ է տալիս աշխատել տեքստի լեզվական նյութի և բովանդակության ընկալման վրա: Բովանդակության ընկալման առումով վերոնշյալ վարժության միջոցով մասնավորապես կարելի է զարգացնել տեքստում ներկայացված փաստերի միջև իմաստային կապերը և հակադրությունները, վերջինների տրամաբանական շարունակությունը գտնելու հմտությունը: Օրինակ՝

- Համակցել տրված բառերը և վերջածանցները
- Համակցել հոմանշային / հականշային գույգերը
- Համակցել նախադասություններն՝ ըստ տեքստի բովանդակության

Իսկ էլետրոնային հարթակում մկնիկի միջոցով կամ սենսորային էկրանի վրա այդ համակցումները կատարելը սովորողի համար ոչ միայն հեշտ է, այլ

նան հետաքրքիր և շահագրոշող՝ հատկապես, եթե խոսքը գնում է բառը և նկարը միացնելու մասին:

3. Ակնթարթային ներկայացման քարտեր (Flashcards). Ակնթարթային քարտերի ցուցադրումը կարող է օգտագործվել բառապաշարի յուրացման և ստուգման նպատակով: Ժամանակակից S2 տեխնոլոգիաներն ուսուցչին թույլ են տալիս ցանկացած տեքստի բառապաշարի հիման վրա պատրաստել ակնթարթային քարտեր և դրանք ցուցադրել լուսատախտակի վրա: Ակնթարթային քարտերի պատրաստման տեխնիկական միջոցներից մեկն է “Cambridge Flashcards Maker” կայք էջը, որի համապատասխան սյունակում տեղադրելով ցանկացած բառ, կարելի է ստանալ այդ բառի ակնթարթային քարտը: Ծրագիրը հնարավորություն է տալիս ստեղծել ոչ միայն պատկերային, այլ նաև տեքստային ակնթարթային քարտեր, գծագրել սեփական պատկերացման քարտը, կարգավորել չափը, էջի վրա տեղակայումը և տպել այն:

4. Տեքստի ունկնդրում ճիշտ ընթերցանության համար. Ժամանակակից S2 տեխնոլոգիաները թույլ են տալիս ցանկացած տեքստ ներմուծել էլեկտրոնային ընթերցարան (<<https://www.naturalreaders.com/>>) և ունկնդրել տեքստը լեզվակիր խոսողի կողմից: Ավելին, ծրագիրը հնարավորություն է տալիս ընտրել ընթերցողի ձայնը ըստ սեռի և կարգավորել ընթերցանության արագությունը: Այս ակտիվության միջոցով կարելի է զարգացնել լեզվական անձանոթ նյութի գործածության հմտությունները՝ անձանոթ բառերի արտասանությունը յուրացնելու և տեքստի հիմնական բովանդակությանը ծանոթացնելու միջոցով:

5. Բառիմաստի բացահայտում. Ավանդական կրթական համատեքստում ընթերցանության տեքստի անձանոթ բառերի իմաստի բացահայտումը կատարվում է բառերը դուրս գրելով և բառարանի օգնությամբ դրանց թարգմանությունը կամ բացատրությունը գտնելով: Մեդիակրթության համատեքստում այս գործընթացը կարելի է իրականացնել ավելի հեշտությամբ և արագ՝ ընդամենը տեքստի անձանոթ բառի վրա սեղմելով: Այսպես, համակարգչի, բջջային հեռախոսի կամ iPad սարքի մեջ ներբեռնելով Amazon Kindle էլեկտրոնային ընթերցարանը, կարելի է սովորողներին հանձնարարել ընթերցել ցանկացած բարդության տեքստ: Ընթերցանության ընթացքում հանդիպելով անձանոթ բառի՝ սովորողը կարող է սեղմել այդ բառի վրա, նշել այն և վայրկենաբար ստանալ բառի բացատրությունը ընթերցարանում ներբեռնված Օքսֆորդ բառարանից: Էլեկտրոնային հարթակում բառիմաստի բացահայտման վարժության այս տեսակը կարող է մեծապես խթանել սովորողի մոտիվացիայի բարձրացմանը հետևյալ պատճառներով.

ա) բառարանում անձանոթ բառի որոնման համար հատկացված ժամանակի խնայողություն

բ) մասնագիտական բառարանի հասանելիության հետ կապված խնդիրներ

6. Նախադասության ընդլայնում. Տեքստի կամ պարբերության մեջ անհրաժեշտ տեղում տրված նախադասության լրացման վարժությունը միտված է տեքստում ներկայացված փաստերը հասկանալու, դրանց միջև տրամաբանական կապեր հաստատելու և դրանք որպես մեկ ամբողջություն ընկալելու կարողության զարգացմանը: Այս վարժությունը կարելի է կատարել նաև ավանդական ձևով, սակայն մեդիակրթության համատեքստում, շնորհիվ S2 տեխնոլոգիաների ընձեռած

հնարավորությունների սովորողը կարող է տեղադրել տրված նախադասությունն իր ընտրած տեղում և պատրաստի վիճակում տեսնել տեքստի այդ պարբերությունը կամ հատվածը, ինչն անհնար է տպագիր տեքստով աշխատելու դեպքում:

7. Տեքստի սեղմում. Այս վարժության նպատակը տեքստում գլխավորն ու երկրորդականը տարբերակելու կարողության զարգացումն է: Ինչպես նախորդ վարժության դեպքում էր, այս վարժությունը նույպես մեդիակրթության համատեքստում կատարելը թույլ է տալիս տեսնել պատրաստի տեքստը: Օրինակ՝

- *Տեքստում կրճատել երկու երկրորդական փաստ*
- *Առանձնացնել տեքստի գլխավոր մտքերն արտահայտող երեք նախադասություն*
- *Տեքստում առանձնացնել այն նախադասությունները, որոնց կրճատումը չի ազդում տեքստի բովանդակության վրա*

8. Դասակարգում. Այս վարժության նպատակը տեքստում ներկայացված փաստերի կազմակերպման կարողության զարգացումն է: Էլեկտրոնային հարթակում վարժությունը կարելի է կատարել մկնիկի օգնությամբ կամ սենսորային էկրանի վրա տեքստից դուրս բերված փաստերը կամ նկարները ըստ հերթականության դասավորելով:

Եզրակացություն

Այսպիսով, ընթերցանության հիմնական կարողությունների զարգացմանն ուղղված վարժությունների համակարգը, որը տարիներ ի վեր կիրառվել է ավանդական կրթության համատեքստում, այլ ձևաչափ է ձեռք բերում մեդիակրթության համատեքստում: Վարժության ավանդական տեքստին ավելանում է վիզուալիզացիան, որը ոչ միան բարձրացնում է սովորողի ընկալողունակության աստիճանը, այլ նաև նրա հետաքրքրվածությունը և մոտիվացիան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան, Մ.Գ. (1985) *Օտար լեզվի դասավանդման մեթոդիկա*. Երևան: «Լույս» հրատարակչություն:
2. Арманова, Ю.Д.; Кузнецов, В.Г. (2008) *Герменевтический аспект языка СМИ. // Язык средств массовой информации: учебное пособие для вузов. / Под ред. М. Н. Володиной. Москва: Академический проект: Альма Матер.*
3. Валгина, Н.С. (2003) *Теория текста*. М.: Логос.
4. Волков, А.А. (2008) *Риторический аспект языка СМИ. // Язык средств массовой информации: учебное пособие для вузов. / Под ред. М.Н. Володиной. Москва: Академический проект: Альма Матер.*
5. Казак, М. (2012) *Специфика современного меидатекста. // Современный дискурс-анализ/ Выпуск 6. Электронный журнал. Доступно на: <www.discourseanalysis.org> [Проверено Март 2017].*
6. Леонтев, А.А. (2008) *Психология воздействия в массовой коммуникации. // Язык средств массовой информации: учебное пособие для вузов. / под ред. М. Н. Володиной. М.: Академический проект: Альма Матер.*

7. Рождественский, Ю.В. (1996) *Введение в общую филологию*. М.: Фонд "Новое тысячелетие".
8. (2011) *Современный медиатекст: учебное пособие*. / отв.ред. Н.А. Кузьмина, Омск.
9. Чернявская, В.Е. (2009) *Лингвистика текста: поликодовость, интертекстуальность, интердискурсивность*. М.: Книжный дом «ЛИБРОКОМ».
10. OECD (2011), *PISA 2009 Results: Students on Line: Digital Technologies and Performance*. Vol. 6.
11. Serafini, F. (2010) *Reading Multimodal Texts: Perceptual, Structural and Ideological Perspectives*. // *Children's Literature in Education*. / Ed. by S. Vejdemo. Vol 41 (2). Springer.
12. Serafini, F.; Youngs, S. (2013) *Reading Workshop 2.0: Children's Literature in the Digital Age*. // *The Reading Teacher*. / Ed. by D. Miller. Vol. 66(5). Springer.

The Particularities of Teaching Reading in Media Education Context

The purpose of this article is twofold. First, it sets out to make a comparative analysis of some particularities of teaching how to read in traditional and media education contexts. Second, it aims at revealing the wide-ranging opportunities of media education context in terms of setting new and more effective reading activities.

Особенности обучения чтению в медиаобразовательном контексте

В статье проведен сравнительный анализ некоторых особенностей обучения чтению в контексте традиционного образования и медиаобразования. А также статья направлен на выявление широких возможностей контекста медиаобразования с точки зрения установления новых и более эффективных методов чтения.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrtyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrtyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // *Investigations in Linguistics*. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // *The European English Messenger*. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ՅՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru